ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)



Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ ____ *3*

2. 2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները ____ *6*

2.1. Միավորների բաշխման հիստոգրամները ____ 6

2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ ____ 11

2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների ____ 12

3. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի աշակերտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից ____ *13*

4. 2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ____ *14*

5. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ____ *16*

6. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի ____ *17*

7. Քննությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատություն ըստ բնակավայրերի տիպերի ____ *20*

1. Ընդհանուր տեղեկություններ

9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական քննություններից 8-20 միավոր ստացած աշակերտին տրվում է հիմնական կրթության վկայական:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվել են ավարտական քննություններ՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

Աղյուսակ 1

Քննությունը	Քննության տեսակը	Քննության օրը
Հայոց լեզու	Գրավոր, թեստ	05.06.2023 թ.
Մաթեմատիկա	Գրավոր, թեստ	12.06.2023 թ.
Բնագիտական առարկաներ («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»)	Գրավոր, թեստ	19.06.2023 թ.
Հայոց պատմություն	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում
Հայ գրականություն	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում
Օտար լեզու («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ)	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում
Ֆիզկուլտուրա	Նորմատիվների հանձնում	Քննաշրջանի ընթացքում
Ռուսաց լեզու (ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար)	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում
Մայրենի լեզու և գրականություն (ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար)	Բանավոր	Քննաշրջանի ընթացքում

Գրավոր քննությունների տևողությունը եղել է 120 րոպե: Քննական թեստերի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից, առաջադրանքներն ընտրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից: «Հայոց լեզու» առարկայի ավարտական քննությունը կենտրոնացված ձևով անցկացվել է 2019, 2021 և 2022 թվականներին, «Մաթեմատիկա» առարկան՝ 2021 և 2022 թվականներին: Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից 2017-2023 թթ. ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական տվյալներ:

Աղյուսակ 2

Հայոց լեզու							
Տարեթիվը	Քննության տեսակը	Մասնա-կիցների թիվը[1]	Դրական միավորի շեմը չհաղթահարած աշակերտների		18-20 միավոր ստացած աշակերտների		Միջին միավորը
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	
2023 թ.	Գրավոր, թեստ	34397	149	0,4 %	5438	15,8 %	13,4
2022 թ.	Կենտրո-նացված	30369	33	0.1 %	4009	13.2 %	13.2
2021 թ.	Կենտրո-նացված	27106	56	0.2 %	4196	15.5 %	13.66
2019 թ.	Կենտրո-նացված	31119	1665	5.4 %	700	2.2 %	12.17
2018 թ.	Փոխա-դրություն	29186	331	1.1 %	4097	14.1 %	12.69
2017 թ.	Փոխա-դրություն	29084	352	1.2 %	4200	14.4 %	12.81

[1] Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ԳԹԿ տվյալների բազա մուտքագրված մասնակիցների թվի:

Աղյուսակ 3

Մաթեմատիկա							
Տարեթիվը	Քննության տեսակը	Մասնա-կիցների թիվը	Դրական միավորի շեմը չհաղթահարած աշակերտների		18-20 միավոր ստացած աշակերտների		Միջին միավորը
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	
2023 թ.	Գրավոր, թեստ	34546	235	0,7 %	5548	16,1 %	12,8
2022 թ.	Կենտրո-նացված	30369	40	0.1 %	4866	16 %	13,3
2021 թ.	Գրավոր, թեստ	29276	25	0.08 %	2726	9.3 %	12.05
2019 թ.	Գրավոր, թեստ	31442	149	0.5 %	2354	7.5 %	12.04
2018 թ.	Գրավոր, թեստ	29061	79	0.3 %	2304	7.9	11.95
2017 թ.	Գրավոր, թեստ	29083	96	0.3 %	2719	9.3 %	12,04

Սանդղակավորումը

Ավարտական քննությունների ամփոփիչ գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարով (առավելագույնը՝ 35 միավոր): Գնահատման 35 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ 20 միավորանոց համակարգում դրական միավորի շեմ է համարվում 8-ը:

Աղյուսակ 4

Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-35)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-35)
1	0	**11**	15-16-17
2	1	**12**	18-19-20
3	2	**13**	21-22
4	3	**14**	23-24
5	4	**15**	25-26
6	5-6	**16**	27-28
7	7-8	**17**	29-30
8	9-10	**18**	31-32
9	11-12	**19**	33-34
10	13-14	**20**	35

2. 2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներ

2.1. Միավորների բաշխման հիստոգրամներ

Միավորների բաշխման հիստոգրամը սյուների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Սյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին): Ստորև ներկայացված են 9-րդ դասարանի ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամներն ըստ առարկաների:



Մաթեմատիկա



Հայ գրականություն



Հայոց պատմություն



Քիմիա



Ֆիզիկա



Կենսաբանություն



Աշխարհագրություն



Ռուսաց լեզու



Անգլերեն







Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը[2] (Mean), ստանդարտ շեղումը[3] (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Բաշխման հիստոգրամներից երևում է, որ ավարտական քննությունների միավորների բաշխումը համաչափ չէ, կորերը շեղված են դեպի բարձր միավորները:

[2] Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:

[3] Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:

2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 5-ում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են 9-րդ դասարանի կենտրոնացված ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ մասնակիցների թիվը, միջին միավորը, ստանդարտ սխալը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 5

Առարկան	Մասնակիցների թիվը[4]	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ստանդարտ սխալը
Հայոց լեզու (գ.)	34397	13,4	3,5	0,02
Մաթեմատիկա (գ.)	34546	12,8	3,7	0,02
Հայոց պատմություն (բ.)	34426	13,2	4,2	0,02
Հայ գրականություն (բ.)	34440	13,9	4,2	0,02
«Քիմիա» (գ.)	1725	13,8	3,8	0.09
«Ֆիզիկա» (գ.)	5836	14	3,5	0,05
«Կենսաբանություն» (գ.)	15590	13,8	3,4	0,03
«Աշխարհագրություն» (գ.)	11437	12,6	3,2	0,03
«Ռուսաց լեզու» (բ.)	19948	14	4,3	0,03
«Անգլերեն» (բ.)	13111	15,7	4	0,04
«Ֆրանսերեն» (բ.)	610	13,9	4,3	0,2
«Գերմաներեն» (բ.)	929	13,9	4,3	0,1

Որքան փոքր է ստանդարտ շեղումը, այնքան միջին միավորը հուսալի է: Այսինքն՝ որքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջը, այնքան լավ է այդ միջին միավորը բնորոշում տվյալ բազմությունը:

[4] Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ԳԹԿ տվյալների բազա մուտքագրված մասնակիցների թվի:

2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 2023 թվականի 9-րդ դասարանի ավարտական քննություններից աշակերտների արդյունքներն ըստ առաջադիմության անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի, որոնք կազմվել են համապատասխանաբար՝ 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ ստացած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1



Անբավարար գնահատականներ ստացել է աշակերտների 0,1-0,8 տոկոսը: 8-13 միավոր ստացել է մասնակիցների 27,2-60,5 տոկոսը, 14-17 միավոր՝ 23,9-36,7 տոկոսը և 9,5-45,2 տոկոսը ստացել է բարձր՝ 18-20 միավոր:

3. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի աշակերտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից

Ստորև բերված դիագրամներում ներկայացված է աշակերտների ընտրությունը բնագիտական առարկաներից և օտար լեզուներից՝ տոկոսային թվերով:

Դիագրամ 2



Բնագիտական առարկաների ընտրության դեպքում, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս շրջանավարտները նախապատվությունը տվել են «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներին, այնուհետև «Ֆիզիկա» առարկային, իսկ «Քիմիա» առարկան ընտրել է մասնակիցների ընդամենը 5 տոկոսը: Օտար լեզուների քննություններին մասնակցածների 57,7 տոկոսը նախընտրել է «Ռուսաց լեզու» առարկան, 37,9 տոկոսը՝ «Անգլերեն» առարկան: Տարեցտարի նվազում է ռուսաց լեզու ընտրողների թիվը:

Մասնակիցների միջին միավորները բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ներկայացված են դիագրամ 3-ում:

Դիագրամ 3



4. 2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 6-ում ներկայացված են բոլոր առարկաներից մասնակիցների ավարտական քննությունների միջին միավորները (ստանդարտ շեղումները) ըստ վարչատարածքային միավորների: Մուգ երանգով նշված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի հանրապետության ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Վարչատա-րածքային միավորը	Միջին միավորը (ստանդարտ շեղումը)					
	Հայոց լեզու (միջին միավորը՝ 13.4)	Հայ գրա-կանություն (միջին միավորը՝ 13.9)	Հայոց պատմություն (միջին միավորը՝ 13.2)	Մաթեմա-տիկա (միջին միավորը՝ 12.8)	Բնագիտական առարկաներ (միջին միավորը՝ 13.2)	Օտար լեզուներ (միջին միավորը՝ 15.2)
Արագածոտն	12,9 (3,3)	13,8 (4,0)	13,1 (4,1)	12,4 (3,4)	13,0 (3,5)	14,4 (4,2)
Արարատ	12,1 (3,3)	12,5 (4,3)	11,9 (4,1)	11,4 (3,3)	12,0 (3,5)	13,8 (4,5)
Արմավիր	13,0 (3,5)	13,4 (4,1)	12,7 (4,2)	12,5 (3,7)	13,0 (3,8)	14,0 (4,7)
Գեղարքունիք	**13,5** (3,6)	**14,3** (4,2)	**13,8** (4,2)	**12,8** (3,8)	**13,5** (3,8)	14,8 (4,2)
Երևան	**14,0** (3,4)	**14,4** (4,2)	**13,8** (4,2)	**13,6** (3,7)	**13,8** (3,7)	**16,1** (4)
Լոռի	13,3 (3,4)	**13,9** (4,2)	13,1 (4,2)	12,7 (3,6)	13,1 (3,9)	14,9 (4,5)
Կոտայք	13,1 (3,5)	13,4 (4,4)	12,8 (4,3)	12,7 (3,6)	13,1 (3,6)	15,0 (4,4)
Շիրակ	**13,7** (3,5)	**14,1** (4,1)	**13,6** (4,2)	**13,0** (3,7)	**13,3** (4)	14,9 (4,7)
Սյունիք	13,3 (3,6)	**14,1** (4,2)	**13,5** (4,3)	**13,0** (3,8)	**13,4** (3,8)	**15,2** (4,4)
Վայոց ձոր	12,9 (3,2)	13,5 (3,9)	12,7 (4,1)	12,4 (3,4)	12,9 (3,6)	13,9 (4,7)
Տավուշ	12,7 (3,4)	13,2 (4,4)	12,2 (4,2)	11,7 (3,5)	12,3 (3,5)	14,1 (4,6)

5. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Դիագրամ 5-ում ներկայացված են ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Դիագրամ 4



Դիագրամ 5-ում տեսնում ենք, որ ներկայացված առարկաներից բարձր արդյունք են գրանցել վարժարաններում սովորող աշակերտները:

6. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի

2023 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների 53 տոկոսը եղել են տղաներ, 47 տոկոսը՝ աղջիկներ: Աղյուսակ 7-ում ներկայացված են մասնակիցների թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները ըստ սեռերի:

Աղյուսակ 7

Առարկան	Աղջիկներ			Տղաներ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու (գ.)	16288	14,41	3,27	18109	12,45	3,38
Հայ գրականություն (բ.)	16303	15,31	3,90	18137	12,54	4,09
Հայոց պատմություն (բ.)	16294	14,35	4,10	18132	12,21	4,12
Մաթեմատիկա (գ.)	16377	13,46	3,69	18169	12,29	3,62
Քիմիա (գ.)	901	14,88	3,48	824	12,62	3,81
Ֆիզիկա (գ.)	2187	14,73	3,27	3649	13,55	3,50
Աշխարհագրություն (գ.)	4473	13,42	3,22	6964	12,15	3,16
Կենսաբանություն (գ.)	8813	14,56	3,23	6777	12,77	3,29
Անգլերեն (բ.)	7329	16,41	3,54	5782	14,61	4,21
Ռուսաց լեզու (բ.)	8215	15,18	4,11	11733	13,17	4,23
Ֆրանսերեն (բ.)	343	15,57	3,743	267	11,84	4,109
Գերմաներեն (բ.)	498	15,37	3,80	431	12,11	4,02

Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ ներկայացված առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները:

Դիագրամ 4-ում ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:

Դիագրամ 5



Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:



Քիմիա



Ֆիզիկա



Կենսաբանություն



Աշխարհագրություն



Ռուսաց լեզու



Անգլերեն



Գերմաներեն



Ֆրանսերեն



7. Քննությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատություն ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 8-ում ներկայացված են քննությունների մասնակիցների տոկոսային թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումներն ըստ բնակավայրերի տիպերի:

Աղյուսակ 8

Բնակավայրի տիպը	Մասնա-կիցների տոկոսը	Միջին միավորը (ստանդարտ շեղումը)			
		Հայոց լեզու	Հայ գրականություն	Հայոց պատմություն	Մաթեմա-տիկա
Խոշոր քաղաքներ	39,4 %	13,6 (4)	14 (4,7)	13,4 (4,7)	13,3 (4)
Միջին քաղաքներ	14,3 %	13,2 (4,1)	13,8 (4,6)	13,1 (4,6)	12,9 (4,1)
Փոքր քաղաքներ	10 %	13,9 (3,7)	14 (4,5)	13,4 (4,7)	13,2 (4)
Գյուղեր	29,3 %	12,3 (3,7)	12,9 (4,4)	12,2 (4,4)	11,6 (3,8)
Սահմանամերձ գյուղեր	3,6 %	12,1 (3,5)	12,7 (4,5)	12,1 (4,2)	11,2 (3,5)
Բարձրլեռնային գյուղեր	3,3 %	12,5 (4,2)	13,5 (4,2)	12,9 (4,3)	11,9 (3,7)
Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր	0,1 %	11,8 (3,5)	12,1 (3,5)	12,2 (3,3)	11,1 (2,8)

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ քաղաքային բնակավայրերում աշակերտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն նշանակալիորեն բարձր են գյուղական բնակավայրերի աշակերտների միջին միավորներից